ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՄԱԾՁԲ-22-8-14

ք. Երևան 20-ը դեկտեմբերի 2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Պատվիրատու», մի կողմից և «Ռեդի-Սթեդի» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Գ. Մարգարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Կատարող», մյուս կողմից, երկուսը միասին՝ կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի

«Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության ընդհանուր գինը կազմում է 9 241 523 (ինը միլիոն երկու հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր քսաներեք) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ ըստ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 26.12.2022թ.:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրն ուժի մեջ մտնելը /1-ին չափաբաժնի մասով ս.թ. հունվարի 1-ից հետո, իսկ 2-րդ չափաբաժնի մասով ս.թ. դեկտեմբերի 6-ից հետո/ կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև պայմանագիր կնքվելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է այդ պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները

կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **15** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանումը՝ ՀՀ ՊՆ գործերի կառավարչությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Բուռնազյան 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 220533332767000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 00851011
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Գլխավոր տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված 1
N ՄԱԾՁԲ-22-8-14 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագիր	
1.	Ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	Միրգ տարբեր	ելակ, թուզ, բալ, ծիրան, նարինջ, խնձոր, թութ, տանձ, սալոր
		Շոկոլադ	չրերով շոկոլադապատ, շոկոլադային հավաքածու
		Խմորեղեն ֆուրշետային	ալյուր, ձու, կարագ, շոկոլադ, մեղր, միրգ, ընդեղեն
		Շաքարավազ հատիկավոր 5գ	հատիկավոր
		Ջուր 0.5լ «Բյուրեղ»	ջուր 0.5լ
		Ջուր 0.5լ «Ջերմուկ»	հանքային ջուր 0.5լ
		Բնական հյութեր տարբեր 0.25լ	սանտալ ապակյա տարա 0.25լ
		Գազավորված ըմպելիք տարբեր 0.25լ	կոկա կոլա թիթեղյա տարա 0.25լ
		Թեյ Ախմադ 0.1կգ	ախմադ բերգամոտ
		Չրերի տեսականի	թզի, դեղձի, սալորի, տանձի, ծիրանի
		Ընդեղենի տեսականի	հնդկական ընկույզ, ընկույզ, նուշ, պնդուկ
		Սուրճ լուծվող 0.1կգ	լուծվող Nescafe Gold
		Սուրճ փարիզյան 0.25կգ	աղացած փարիզյան, հատիկավոր
		Մուրաբա 0.45կգ	ելակ, թուզ, բալ, ծիրան
		Անձեռոցիկ գրպանի	անձեռոցիկ եռաշերտ փոքր
		Անձեռոցիկ	անձեռոցիկ եռաշերտ
		Ճաշի կազմակերպում	օրվա ընթացքում առաջին ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, 2-րդ ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, աղցաններ՝ ոչ պակաս 2 տեսակի, մսեղեն և ձկնեղեն՝ ոչ պակաս 2 տեսակի, ըմպելիքներ
		Սպասարկում	սպասարկող անձնակազմ

Հ/հ	Ծառայության անվանումը	Ֆուրշետ	
2.	Ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ	կանապե հոլանդական պանրով	հաց, լոլիկ, վարունգ, հազար, հոլ. պանիր, ձիթապտուղ
		կանապե ռոքֆոր պանրով	հաց, լոլիկ, վարունգ, հազար, ռոքֆոր պանիր, ձիթապտուղ
		կանապե կնջութապատ ֆետա պանրով	հաց, լոլիկ, վարունգ, հազար, ֆետա պանիր, ձիթապտուղ
		կանապե ապ. երշիկով	հաց, լոլոիկ, վարունգ, հազար, ապ. երշիկ, ձիթապտուղ
		կանապե խոզի ապ. ֆիլեով	հաց, լոլիկ, վարունգ, հազար, խոզի ապ. ֆիլե, ձիթապտուղ

		կանապե հորթի ապ. ֆիլեով	հաց, լոլիկ, վարունգ, հազար, հորթի ապ. ֆիլե, ձիթապտուղ
		բրուսկետա կլասիկ	հաց, թանձրուկ, լոլիկ, ռեհան, ձիթապտուղ, բալզամիկ
		բրուսկետա հավով	հաց, թանձրուկ, լոլիկ, հավի կրծքամիս
		լավաշով ռոլ	սև լավաշ, գունավոր պղպեղ, հազար, սերուցքային պանիր գազար
		լավաշով ռոլ	սպ. լավաշ, հավի կրծքամիս, գազար, համեմունքներ, մեջիկ թանձրուկ
		սենդվիչ փոքր	սենդվիչի հաց, հազար, լոլիկ, վարունգ, սպիտակ թանձրուկ, ֆետա պանիր
		սենդվիչ փոքր	սենդվիչի հաց, հազար, լոլիկ, վարունգ, սպիտակ թանձրուկ, խոզի ապ. ֆիլե, հոլ. պանիր
		սենդվիչ փոքր	սենդվիչի հաց, հազար, լոլիկ, վարունգ, սպիտակ թանձրուկ, հավի կրծքամիս
		սենդվիչ փոքր	սենդվիչի հաց, հազար, լոլիկ, վարունգ, սպիտակ թանձրուկ, տապակած դդմիկ
		շերտավոր խմ. կարկանդակ	շերտավոր խմոր, հոլ. պանիր մանրացրած վիչինա
		շերտավոր խմ. կարկանդակ	շերտավոր խմոր, պանրային խճուղակ
		շերտավոր խմ. կարկանդակ	շերտավոր խմոր, հավի կրծքամիս, համեմունքներով պատրաստված
		զովացուցիչ ըմպելիքներ	կոլա, ֆանտա, սպրայթ 0.5լ
		ջուր	ջուր 0.5լ, հանքային ջուր 0.5լ
		բնական լիմոնադներ	թարմ, մրգերից պատրաստված
		գինի	հայկական կիսաչոր, «Իջևան», վարդի
		ծառայության վճար	սպասարկող, ծառայության վճար
		Սուրճ-ընդմիջում	
		ֆուրշետային խմորեղեն	ալյուր, ձու, կրեմ
		մրգերի կոմպոզիցիա	անանաս, նարինջ, թուրինջ, խնձոր, տանձ, մանդարին, արքայանարինջ
		սուրճ	լուծվող սուրճի տեսականի
		թեյ	կանաչ, սև, մրգային
		կաթ, սերուցք	կաթ, սերուցք
		ջուր	ջուր 0.5լ, հանքային ջուր 0.5լ
		բնական լիմոնադներ	թարմ, մրգերից պատրաստված
		ծառայության վճար	սպասարկող, ծառայության վճար

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
Գլխավոր տնօրեն

Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Ծառայության մատուցման ժամկետ
1	Ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ, այդ թվում	դրամ	1	8 896 343	2022թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին, բայց ոչ ուշ քան 20.12.2022թ.

Մատուցվող ծառայության վայրը՝ ք. Երևան, Բագրևանդի 5:

Հ/հ	Գնման առարկայի անվանում	Ֆունկցիոնալ նկարագիր և չափման միավոր		Քանակ	Միավորի գին	Ընհանուր գումար	Մատուցման ժամկետ
	ՀՀ պաշտպանության նախարարի մոտ 2022թ. ընթացքում տարբեր ընդունելությունների ժամանակ կազմակերպված ֆուրշետներ և սուրճի ընդմիջումներ, այդ թվում՝		**դրամ**	**1,00**	**8 896 343,00**	**8 896 343,00**	
1,1	Միրգ տարբեր	ելակ, թուզ, բալ, ծիրան, նարինջ, խնձոր, թութ, տանձ, սալոր	կգ	25,00	1 590,00	39 750,00	**2022թ. հունվար**
	Շոկոլադ	չրերով շոկոլադապատ, շոկոլադային հավաքածու	կգ	4,00	5 646,00	22 584,00	
	Խմորեղեն ֆուրշետային	ալյուր, ձու, կարագ, շոկոլադ, մեղր, միրգ, ընդեղեն	հատ	16,00	350,00	5 600,00	
	Ջուր 0.5լ «Ջերմուկ»	հանքային ջուր 0.5լ	շիշ	144,00	85,00	12 240,00	
	Բնական հյութեր տարբեր 0.25լ	սանտալ ապակյա տարա 0.25լ	շիշ	69,00	556,00	38 364,00	
	Գազավորված ըմպելիք տարբեր 0.25լ	կոկա կոլա թիթեղյա տարա 0.25լ	շիշ	288,00	145,00	41 760,00	
	Թեյ Ախմադ 0.1կգ	ախմադ բերգամոտ	տուփ	1,00	800,00	800,00	
	Չրերի տեսականի	թզի, դեղձի, սալորի, տանձի, ծիրանի	կգ	8,00	4 947,00	39 576,00	
	Ընդեղենի տեսականի	հնդկական ընկույզ, ընկույզ, նուշ, պնդուկ	կգ	4,00	9 025,00	36 100,00	
	Սուրճ լուծվող 0.1կգ	լուծվող Nescafe Gold	տուփ	1,00	2 750,00	2 750,00	
	Սուրճ փարիզյան 0.25կգ	աղացած փարիզյան, հատիկավոր	տուփ	4,00	1 815,00	7 260,00	
	Անձեռոցիկ	անձեռոցիկ եռաշերտ	տուփ	11,00	95,00	1 045,00	
	Սպասարկում	սպասարկող անձնակազմ	դրամ	1,00	125 000,00	125 000,00	
1,2	Միրգ տարբեր	ելակ, թուզ, բալ, ծիրան, նարինջ, խնձոր, թութ, տանձ, սալոր	կգ	16,00	1 778,00	28 448,00	**2022թ. փետրվար**
	Շոկոլադ	չրերով շոկոլադապատ, շոկոլադային հավաքածու	կգ	2,00	5 510,00	11 020,00	
	Շաքարավազ	հատիկավոր	հատ	74,00	20,00	1 480,00	
	Ջուր 0.5լ «Բյուրեղ»	ջուր 0.5լ	շիշ	132,00	85,00	11 220,00	
	Ջուր 0.5լ «Ջերմուկ»	հանքային ջուր 0.5լ	շիշ	120,00	120,00	14 400,00	
	Բնական հյութեր տարբեր	սանտալ ապակյա տարա 0.25լ	շիշ	33,00	650,00	21 450,00	
	Գազավորված ըմպելիք տարբեր	կոկա կոլա թիթեղյա տարա 0.25լ	շիշ	60,00	159,00	9 540,00	
	Թեյ Ախմադ	ախմադ բերգամոտ	տուփ	1,00	1 050,00	1 050,00	
	Չրերի տեսականի	թզի, դեղձի, սալորի, տանձի, ծիրանի	կգ	3,00	5 860,00	17 580,00	
	Ընդեղենի տեսականի	հնդկական ընկույզ, ընկույզ, նուշ, պնդուկ	կգ	3,00	10 080,00	30 240,00	

	Սուրճ լուծվող	լուծվող Nescafe Gold	տուփ	3,00	2 780,00	8 340,00	
	Սուրճ փարիզյան	աղացած փարիզյան, հատիկավոր	տուփ	6,00	2 100,00	12 600,00	
	Մուրաբա	ելակ, թուզ, բալ, ծիրան	հատ	6,00	975,00	5 850,00	
	Ճաշի կազմակերպում	օրվա ընթացքում առաջին ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, 2-րդ ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, աղցաններ՝ ոչ պակաս 2 տեսակի, մսեղեն և ձկնեղեն՝ ոչ պակաս 2 տեսակի, ըմպելիքներ	անձ	135,00	1 500,00	202 500,00	
	Սպասարկում	սպասարկող անձնակազմ	դրամ	1,00	130 000,00	130 000,00	
1,3	Միրգ տարբեր	ելակ, թուզ, բալ, ծիրան, նարինջ, խնձոր, թութ, տանձ, սալոր	կգ	48,00	2 090,00	100 320,00	2022թ. մարտ
	Շոկոլադ	չրերով շոկոլադապատ, շոկոլադային հավաքածու	կգ	6,00	5 555,00	33 330,00	
	Շաքարավազ	հատիկավոր	հատ	83,00	20,00	1 660,00	
	Ջուր 0.5լ «Բյուրեղ»	ջուր 0.5լ	շիշ	132,00	85,00	11 220,00	
	Ջուր 0.5լ «Ջերմուկ»	հանքային ջուր 0.5լ	շիշ	144,00	125,00	18 000,00	
	Բնական հյութեր տարբեր	սանտալ ապակյա տարա 0.25լ	շիշ	25,00	552,00	13 800,00	
	Գազավորված ըմպելիք տարբեր	կոկա կոլա թիթեղյա տարա 0.25լ	շիշ	50,00	270,00	13 500,00	
	Թեյ Ախմադ	ախմադ բերգամոտ	տուփ	3,00	1 000,00	3 000,00	
	Չրերի տեսականի	թզի, դեղձի, սալորի, տանձի, ծիրանի	կգ	6,00	6 333,00	37 998,00	
	Ընդեղենի տեսականի	հնդկական ընկույզ, ընկույզ, նուշ, պնդուկ	կգ	7,00	10 200,00	71 400,00	
	Սուրճ լուծվող	լուծվող Nescafe Gold	տուփ	6,00	2 412,00	14 472,00	
	Սուրճ փարիզյան	աղացած փարիզյան, հատիկավոր	տուփ	4,00	2 100,00	8 400,00	
	Մուրաբա	ելակ, թուզ, բալ, ծիրան	հատ	9,00	908,00	8 172,00	
	Անձեռոցիկ	անձեռոցիկ եռաշերտ	հատ	15,00	120,00	1 800,00	
	Ճաշի կազմակերպում	օրվա ընթացքում առաջին ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, 2-րդ ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, աղցաններ՝ ոչ պակաս 2 տեսակի, մսեղեն և ձկնեղեն՝ ոչ պակաս 2 տեսակի, ըմպելիքներ	անձ	199,00	1 500,00	298 500,00	
	Սպասարկում	սպասարկող անձնակազմ	դրամ	1,00	150 000,00	150 000,00	
1,4	Միրգ տարբեր	ելակ, թուզ, բալ, ծիրան, նարինջ, խնձոր, թութ, տանձ, սալոր	կգ	46,00	2 285,00	105 110,00	2022թ. ապրիլ
	Շոկոլադ	չրերով շոկոլադապատ, շոկոլադային հավաքածու	կգ	18,00	1 992,00	35 856,00	
	Խմորեղեն ֆուրշետային	ալյուր, ձու, կարագ, շոկոլադ, մեղր, միրգ, ընդեղեն	հատ	33,00	350,00	11 550,00	
	Շաքարավազ	հատիկավոր	հատ	76,00	20,00	1 520,00	
	Ջուր 0.5լ «Բյուրեղ»	ջուր 0.5լ	շիշ	204,00	93,00	18 972,00	
	Ջուր 0.5լ «Ջերմուկ»	հանքային ջուր 0.5լ	շիշ	204,00	120,00	24 480,00	
	Բնական հյութեր տարբեր	սանտալ ապակյա տարա 0.25լ	շիշ	105,00	650,00	68 250,00	
	Գազավորված ըմպելիք տարբեր	կոկա կոլա թիթեղյա տարա 0.25լ	շիշ	120,00	176,00	21 120,00	
	Թեյ Ախմադ	ախմադ բերգամոտ	տուփ	2,00	1 010,00	2 020,00	

	Չրերի տեսականի	թզի, դեղձի, սալորի, տանձի, ծիրանի	կգ	4,00	9 500,00	38 000,00	
	Ընդեղենի տեսականի	հնդկական ընկույզ, ընկույզ, նուշ, պնդուկ	կգ	44,00	1 577,00	69 388,00	
	Սուրճ լուծվող	լուծվող Nescafe Gold	տուփ	3,00	2 103,00	6 309,00	
	Սուրճ փարիզյան	աղացած փարիզյան, հատիկավոր	տուփ	10,00	1 910,00	19 100,00	
	Մուրաբա	ելակ, թուզ, բալ, ծիրան	հատ	4,00	890,00	3 560,00	
	Անձեռոցիկ	անձեռոցիկ եռաշերտ	հատ	42,00	63,00	2 646,00	
	Ճաշի կազմակերպում	օրվա ընթացքում առաջին ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, 2-րդ ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, աղցաններ՝ ոչ պակաս 2 տեսակի, մսեղեն և ձկնեղեն՝ ոչ պակաս 2 տեսակի, ըմպելիքներ	անձ	60,00	1 500,00	90 000,00	
	Սպասարկում	սպասարկող անձնակազմ	դրամ	1,00	174 000,00	174 000,00	
1,5	Միրգ տարբեր	ելակ, թուզ, բալ, ծիրան, նարինջ, խնձոր, թութ, տանձ, սալոր	կգ	41,00	2 563,00	105 083,00	**2022թ. մայիս**
	Շոկոլադ	չրերով շոկոլադապատ, շոկոլադային հավաքածու	կգ	7,00	3 123,00	21 861,00	
	Ջուր 0.5լ «Բյուրեղ»	ջուր 0.5լ	շիշ	324,00	110,00	35 640,00	
	Ջուր 0.5լ «Ջերմուկ»	հանքային ջուր 0.5լ	շիշ	324,00	120,00	38 880,00	
	Գազավորված ըմպելիք տարբեր	կոկա կոլա թիթեղյա տարա 0.25լ	շիշ	26,00	150,00	3 900,00	
	Թեյ Ախմադ	ախմադ բերգամոտ	տուփ	1,00	740,00	740,00	
	Չրերի տեսականի	թզի, դեղձի, սալորի, տանձի, ծիրանի	կգ	5,00	8 747,00	43 735,00	
	Ընդեղենի տեսականի	հնդկական ընկույզ, ընկույզ, նուշ, պնդուկ	կգ	3,00	13 000,00	39 000,00	
	Սուրճ լուծվող	լուծվող Nescafe Gold	տուփ	2,00	1 490,00	2 980,00	
	Սուրճ փարիզյան	աղացած փարիզյան, հատիկավոր	տուփ	10,00	1 971,00	19 710,00	
	Մուրաբա	ելակ, թուզ, բալ, ծիրան	հատ	5,00	856,00	4 280,00	
	Անձեռոցիկ	անձեռոցիկ եռաշերտ	հատ	14,00	148,00	2 072,00	
	Ճաշի կազմակերպում	օրվա ընթացքում առաջին ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, 2-րդ ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, աղցաններ՝ ոչ պակաս 2 տեսակի, մսեղեն և ձկնեղեն՝ ոչ պակաս 2 տեսակի, ըմպելիքներ	անձ	97,00	1 500,00	145 500,00	
	Սպասարկում	սպասարկող անձնակազմ	դրամ	1,00	162 000,00	162 000,00	
1,6	Միրգ տարբեր	ելակ, թուզ, բալ, ծիրան, նարինջ, խնձոր, թութ, տանձ, սալոր	կգ	108,00	2 786,00	300 888,00	**2022թ. հունիս**
	Շոկոլադ	չրերով շոկոլադապատ, շոկոլադային հավաքածու	կգ	12,00	3 540,00	42 480,00	
	Խմորեղեն ֆուրշետային	ալյուր, ձու, կարագ, շոկոլադ, մեղր, միրգ, ընդեղեն	հատ	85,00	350,00	29 750,00	
	Ջուր 0.5լ «Բյուրեղ»	ջուր 0.5լ	շիշ	300,00	110,00	33 000,00	
	Ջուր 0.5լ «Ջերմուկ»	հանքային ջուր 0.5լ	շիշ	280,00	120,00	33 600,00	
	Բնական հյութեր տարբեր	սանտալ ապակյա տարա 0.25լ	շիշ	89,00	650,00	57 850,00	
	Թեյ Ախմադ	ախմադ բերգամոտ	տուփ	2,00	1 005,00	2 010,00	
	Չրերի տեսականի	թզի, դեղձի, սալորի,	կգ	1,00	11 000,00	11 000,00	

		տանձի, ծիրանի					
	Սուրճ լուծվող	լուծվող Nescafe Gold	տուփ	4,00	3 060,00	12 240,00	
	Սուրճ փարիզյան	աղացած փարիզյան, հատիկավոր	տուփ	8,00	1 990,00	15 920,00	
	Անձեռոցիկ գրպանի	անձեռոցիկ եռաշերտ փոքր	հատ	30,00	50,00	1 500,00	
	Ճաշի կազմակերպում	օրվա ընթացքում առաջին ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, 2-րդ ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, աղցաններ՝ ոչ պակաս 2 տեսակի, մսեղեն և ձկնեղեն՝ ոչ պակաս 2 տեսակի, ըմպելիքներ	անձ	133,00	1 500,00	199 500,00	
	Սպասարկում	սպասարկող անձնակազմ	դրամ	1,00	132 000,00	132 000,00	
1,7	Միրգ տարբեր	ելակ, թուզ, բալ, ծիրան, նարինջ, խնձոր, թութ, տանձ, սալոր	կգ	85,00	2 542,00	216 070,00	2022թ. հուլիս
	Շոկոլադ	չրերով շոկոլադապատ, շոկոլադային հավաքածու	կգ	7,00	5 800,00	40 600,00	
	Խմորեղեն ֆուրշետային	ալյուր, ձու, կարագ, շոկոլադ, մեղր, միրգ, ընդեղեն	հատ	19,00	350,00	6 650,00	
	Ջուր 0.5լ «Բյուրեղ»	ջուր 0.5լ	շիշ	120,00	110,00	13 200,00	
	Ջուր 0.5լ «Ջերմուկ»	հանքային ջուր 0.5լ	շիշ	100,00	120,00	12 000,00	
	Բնական հյութեր տարբեր	սանտալ ապակյա տարա 0.25լ	շիշ	9,00	650,00	5 850,00	
	Չրերի տեսականի	թզի, դեղձի, սալորի, տանձի, ծիրանի	կգ	2,00	12 260,00	24 520,00	
	Ընդեղենի տեսականի	հնդկական ընկույզ, ընկույզ, նուշ, պնդուկ	կգ	3,00	12 816,00	38 448,00	
	Սուրճ լուծվող	լուծվող Nescafe Gold	տուփ	5,00	2 061,00	10 305,00	
	Սուրճ փարիզյան	աղացած փարիզյան, հատիկավոր	տուփ	6,00	1 760,00	10 560,00	
	Անձեռոցիկ գրպանի	անձեռոցիկ եռաշերտ փոքր	հատ	16,00	50,00	800,00	
	Անձեռոցիկ	անձեռոցիկ եռաշերտ	հատ	2,00	620,00	1 240,00	
	Ճաշի կազմակերպում	օրվա ընթացքում առաջին ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, 2-րդ ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, աղցաններ՝ ոչ պակաս 2 տեսակի, մսեղեն և ձկնեղեն՝ ոչ պակաս 2 տեսակի, ըմպելիքներ	անձ	79,00	1 500,00	118 500,00	
	Սպասարկում	սպասարկող անձնակազմ	դրամ	1,00	174 000,00	174 000,00	
1,8	Միրգ տարբեր	ելակ, թուզ, բալ, ծիրան, նարինջ, խնձոր, թութ, տանձ, սալոր	կգ	253,00	845,00	213 785,00	2022թ. օգոստոս
	Շոկոլադ	չրերով շոկոլադապատ, շոկոլադային հավաքածու	կգ	6,00	2 650,00	15 900,00	
	Ջուր 0.5լ «Բյուրեղ»	ջուր 0.5լ	շիշ	150,00	110,00	16 500,00	
	Ջուր 0.5լ «Ջերմուկ»	հանքային ջուր 0.5լ	շիշ	150,00	120,00	18 000,00	
	Բնական հյութեր տարբեր	սանտալ ապակյա տարա 0.25լ	շիշ	60,00	640,00	38 400,00	
	Գազավորված ըմպելիք տարբեր	կոկա կոլա թիթեղյա տարա 0.25լ	շիշ	25,00	156,00	3 900,00	
	Թեյ Ախմադ	ախմադ բերգամոտ	տուփ	4,00	935,00	3 740,00	
	Ընդեղենի տեսականի	հնդկական ընկույզ, ընկույզ, նուշ, պնդուկ	կգ	4,00	3 763,00	15 052,00	
	Սուրճ լուծվող	լուծվող Nescafe Gold	տուփ	7,00	2 528,00	17 696,00	

	Սուրճ փարիզյան	աղացած փարիզյան, հատիկավոր	տուփ	8,00	2 100,00	16 800,00	
	Մուրաբա	ելակ, թուզ, բալ, ծիրան	հատ	2,00	890,00	1 780,00	
	Անձեռոցիկ գրպանի	անձեռոցիկ եռաշերտ փոքր	հատ	62,00	50,00	3 100,00	
	Անձեռոցիկ	անձեռոցիկ եռաշերտ	հատ	1,00	550,00	550,00	
	Ճաշի կազմակերպում	օրվա ընթացքում առաջին ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, 2-րդ ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, աղցաններ՝ ոչ պակաս 2 տեսակի, մսեղեն և ձկնեղեն՝ ոչ պակաս 2 տեսակի, ըմպելիքներ	անձ	112,00	1 500,00	168 000,00	
	Սպասարկում	սպասարկող անձնակազմ	դրամ	1,00	177 000,00	177 000,00	
1,9	Միրգ տարբեր	ելակ, թուզ, բալ, ծիրան, նարինջ, խնձոր, թութ, տանձ, սալոր	կգ	180,00	1 495,00	269 100,00	2022թ. սեպտեմբեր
	Շոկոլադ	չրերով շոկոլադապատ, շոկոլադային հավաքածու	կգ	18,00	3 415,00	61 470,00	
	Ջուր 0.5լ «Բյուրեղ»	ջուր 0.5լ	շիշ	150,00	110,00	16 500,00	
	Ջուր 0.5լ «Ջերմուկ»	հանքային ջուր 0.5լ	շիշ	150,00	120,00	18 000,00	
	Բնական հյութեր տարբեր	սանտալ ապակյա տարա 0.25լ	շիշ	97,00	650,00	63 050,00	
	Գազավորված ըմպելիք տարբեր	կոկա կոլա թիթեղյա տարա 0.25լ	շիշ	49,00	197,00	9 653,00	
	Թեյ Ախմադ	ախմադ բերգամոտ	տուփ	2,00	1 050,00	2 100,00	
	Չրերի տեսականի	թզի, դեղձի, սալորի, տանձի, ծիրանի	կգ	2,00	13 000,00	26 000,00	
	Ընդեղենի տեսականի	հնդկական ընկույզ, ընկույզ, նուշ, պնդուկ	կգ	18,00	5 767,00	103 806,00	
	Սուրճ լուծվող	լուծվող Nescafe Gold	տուփ	2,00	1 415,00	2 830,00	
	Սուրճ փարիզյան	աղացած փարիզյան, հատիկավոր	տուփ	12,00	1 867,00	22 404,00	
	Անձեռոցիկ գրպանի	անձեռոցիկ եռաշերտ փոքր	հատ	20,00	50,00	1 000,00	
	Անձեռոցիկ	անձեռոցիկ եռաշերտ	հատ	4,00	650,00	2 600,00	
	Ճաշի կազմակերպում	օրվա ընթացքում առաջին ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, 2-րդ ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, աղցաններ՝ ոչ պակաս 2 տեսակի, մսեղեն և ձկնեղեն՝ ոչ պակաս 2 տեսակի, ըմպելիքներ	անձ	118,00	1 500,00	177 000,00	
	Սպասարկում	սպասարկող անձնակազմ	դրամ	1,00	167 950,00	167 950,00	
1,10	Միրգ տարբեր	ելակ, թուզ, բալ, ծիրան, նարինջ, խնձոր, թութ, տանձ, սալոր	կգ	97,00	2 174,00	210 878,00	2022թ. հոկտեմբեր
	Շոկոլադ	չրերով շոկոլադապատ, շոկոլադային հավաքածու	կգ	6,00	5 800,00	34 800,00	
	Ջուր 0.5լ «Բյուրեղ»	ջուր 0.5լ	շիշ	150,00	110,00	16 500,00	
	Բնական հյութեր տարբեր	սանտալ ապակյա տարա 0.25լ	շիշ	12,00	650,00	7 800,00	
	Գազավորված ըմպելիք տարբեր	կոկա կոլա թիթեղյա տարա 0.25լ	շիշ	26,00	150,00	3 900,00	
	Թեյ Ախմադ	ախմադ բերգամոտ	տուփ	2,00	900,00	1 800,00	
	Չրերի տեսականի	թզի, դեղձի, սալորի, տանձի, ծիրանի	կգ	2,00	11 902,00	23 804,00	
	Ընդեղենի տեսականի	հնդկական ընկույզ, ընկույզ, նուշ, պնդուկ	կգ	24,00	4 260,00	102 240,00	

	Սուրճ փարիզյան	աղացած փարիզյան, հատիկավոր	տուփ	17,00	2 100,00	35 700,00	
	Մուրաբա	ելակ, թուզ, բալ, ծիրան	հատ	13,00	860,00	11 180,00	
	Անձեռոցիկ գրպանի	անձեռոցիկ եռաշերտ փոքր	հատ	30,00	45,00	1 350,00	
	Անձեռոցիկ	անձեռոցիկ եռաշերտ	հատ	3,00	650,00	1 950,00	
	Ճաշի կազմակերպում	օրվա ընթացքում առաջին ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, 2-րդ ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, աղցաններ՝ ոչ պակաս 2 տեսակի, մսեղեն և ձկնեղեն՝ ոչ պակաս 2 տեսակի, ըմպելիքներ	անձ	159,00	1 500,00	238 500,00	
	Սպասարկում	սպասարկող անձնակազմ	դրամ	1,00	180 000,00	180 000,00	
1,11	Միրգ տարբեր	ելակ, թուզ, բալ, ծիրան, նարինջ, խնձոր, թութ, տանձ, սալոր	կգ	139,00	2 010,00	279 390,00	2022թ. նոյեմբեր
	Շոկոլադ	չրերով շոկոլադապատ, շոկոլադային հավաքածու	կգ	14,00	5 142,00	71 988,00	
	Շաքարավազ	հատիկավոր	հատ	150,00	20,00	3 000,00	
	Բնական հյութեր տարբեր	սանտալ ապակյա տարա 0.25լ	շիշ	22,00	622,00	13 684,00	
	Թեյ Ախմադ	ախմադ բերգամոտ	տուփ	6,00	975,00	5 850,00	
	Չրերի տեսականի	թզի, դեղձի, սալորի, տանձի, ծիրանի	կգ	6,00	12 070,00	72 420,00	
	Ընդեղենի տեսականի	հնդկական ընկույզ, ընկույզ, նուշ, պնդուկ	կգ	17,00	4 970,00	84 490,00	
	Սուրճ փարիզյան	աղացած փարիզյան, հատիկավոր	տուփ	8,00	2 000,00	16 000,00	
	Մուրաբա	ելակ, թուզ, բալ, ծիրան	հատ	68,00	988,00	67 184,00	
	Անձեռոցիկ գրպանի	անձեռոցիկ եռաշերտ փոքր	հատ	37,00	48,00	1 776,00	
	Ճաշի կազմակերպում	օրվա ընթացքում առաջին ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, 2-րդ ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, աղցաններ՝ ոչ պակաս 2 տեսակի, մսեղեն և ձկնեղեն՝ ոչ պակաս 2 տեսակի, ըմպելիքներ	անձ	167,00	1 500,00	250 500,00	
	Սպասարկում	սպասարկող անձնակազմ	դրամ	1,00	243 000,00	243 000,00	
1,12	Միրգ տարբեր	ելակ, թուզ, բալ, ծիրան, նարինջ, խնձոր, թութ, տանձ, սալոր	կգ	71,00	2 467,00	175 157,00	2022թ. դեկտեմբեր
	Շոկոլադ	չրերով շոկոլադապատ, շոկոլադային հավաքածու	կգ	4,00	5 676,00	22 704,00	
	Բնական հյութեր տարբեր	սանտալ ապակյա տարա 0.25լ	շիշ	37,00	560,00	20 720,00	
	Չրերի տեսականի	թզի, դեղձի, սալորի, տանձի, ծիրանի	կգ	5,00	9 000,00	45 000,00	
	Ընդեղենի տեսականի	հնդկական ընկույզ, ընկույզ, նուշ, պնդուկ	կգ	1,00	11 800,00	11 800,00	
	Սուրճ փարիզյան	աղացած փարիզյան, հատիկավոր	տուփ	2,00	2 100,00	4 200,00	
	Մուրաբա	ելակ, թուզ, բալ, ծիրան	հատ	8,00	1 050,00	8 400,00	
	Անձեռոցիկ գրպանի	անձեռոցիկ եռաշերտ փոքր	հատ	51,00	50,00	2 550,00	
	Անձեռոցիկ	անձեռոցիկ եռաշերտ	հատ	4,00	650,00	2 600,00	

	Ճաշի կազմակերպում	օրվա ընթացքում առաջին ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, 2-րդ ճաշատեսակ՝ ոչ պակաս 2 տեսակի, աղցաններ՝ ոչ պակաս 2 տեսակի, մսեղեն և ձկնեղեն՝ ոչ պակաս 2 տեսակի, ըմպելիքներ	անձ	134,00	1 500,00	201 000,00	
	Սպասարկում	սպասարկող անձնակազմ	դրամ	1,00	243 000,00	243 000,00	

Հ/հ	Գնման առարկան	Չափման միավորը	Քանակը	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Ծառայության մատուցման ժամկետ
2	Ներկայացուցչական, արարողակարգային ծառայություններ, այդ թվում	դրամ	1		345 180	2022թ. դեկտեմբերի 6-ին
	Ֆուրշետ	անձ	60	3 788	227 280	
	Սուրճ-ընդմիջում	անձ	60	1 965	117 900	

Մատուցվող ծառայության վայրը՝ ք.Երևան, Ուլնեցու 56/6

Հավելված 2
N ՄԱԾՁԲ-22-8-14 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել 2022թ., ըստ եռամսյակների (աճողական), բայց ոչ ուշ քան 26.12.2022թ.,
			4-րդ եռամսյակ
1	Ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ	98391160/1	8 896 343
2	Ներկայացուցչական արարողակարգային ծառայություններ	98391160/1	345 180

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ **ԿԱՏԱՐՈՂ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Հ. ԲՐՈՒՏՅԱՆ

«Ռեդի-Սթեդի» ՍՊԸ
Գլխավոր տնօրեն

Գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված 3
ՄԱԾՁԲ-22-8-14 ծածկագրով
պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
ՄԱԾՁԲ-22-8-14 ծածկագրով
պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն